ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 6

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական

խորհրդի 2019թ. հունվարի 18-ի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԱՀ-ի 2016թ. հաստատված (արձ. №13) «ՀԱԱՀ ուսանողների հաճախումների հաշվառման և անհատական պարապմունքների կազմակերպման կանոնակարգ» - ում լրացում կատարելու հարցը:
2. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ ՀԱԱՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյանը ներկայացրեց գիտական խորհրդի հաստատմանը «ՀԱԱՀ ուսանողների հաճախումների հաշվառման և անհատական պարապմունքների կազմակերպման կանոնակարգ» - ում փոփոխություն կատարելու հարցը:

Հիմք ընդունելով Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 2018թ. նոյեմբերի 23-ի ռեկտորատի նիստի թիվ 4 արձանագրության 2.8 կետը՝ առաջարկվեց ՀԱԱՀ գիտական խորհրդում (2016թ. 18.07 արձ արձ. №13) հաստատված «ՀԱԱՀ ուսանողների հաճախումների հաշվառման և անհատական պարապմունքների կազմակերպման կանոնակարգ»-ի 3-րդ կետից հետո լրացնել 3.1 կետը հետևյալ բովանդակությամբ՝

3.1 Այն ուսանողները, ովքեր կիսամյակի ընթացքում տվյալ առարկայից անհարգելի բացակայել են ուսումնական պլանով սահմանված լսարանային /դասախոսություն, գործնական, լաբորատոր, սեմինար, ուսումնաարտադրական պրակտիկաներ/ ժամաքանակի 50%-ից ավելին, չթույլատրել մասնակցելու առարկայի քննությանը /ստուգարքին/ (համարելով անբավարար արաջադիմություն ցուցաբերած ուսանողներ) և հիմք ընդունելով 2018թ. դեկտեմբերի 17-ի ՀՀ ԿԳ նախարարի 1676-Ն «ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. նոյեմբերի 17-ի №1242-Ն հրամանի մեջ փոփոխություն կատարելու մասին» հրամանի 11-րդ կետը՝ ընթացիկ անբավարար առաջադիմություն ցուցաբերած

ուսանողներին թույլատրել մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնել մինչև 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքը՝ բուհի կողմից սահմանված կարգով:

Որոշեցին՝ Հաստատել ներկայացված առաջարկությունը և «ՀԱԱՀ ուսանողների հաճախումների հաշվառման և անհատական պարապմունքների կազմակերպման կանոնակարգ» - ի 3-րդ կետում կատարել փոփոխություն և լրացնել 3.1 կետը հետևյալ բովանդակությամբ՝

3.1 Այն ուսանողները, ովքեր կիսամյակի ընթացքում տվյալ առարկայից անհարգելի բացակայել են ուսումնական պլանով սահմանված լսարանային /դասախոսություն, գործնական, լաբորատոր, սեմինար, ուսումնաարտադրական պրակտիկաներ/ ժամաքանակի 50%-ից ավելին, չթույլատրել մասնակցելու առարկայի քննությանը /ստուգարքին/ (համարելով անբավարար արաջադիմություն ցուցաբերած ուսանողներ) և հիմք ընդունելով 2018թ. դեկտեմբերի 17-ի ՀՀ ԿԳ նախարարի 1676-Ն «ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. նոյեմբերի 17-ի №1242-Ն հրամանի մեջ փոփոխություն կատարելու մասին» հրամանի 11-րդ կետը՝ ընթացիկ անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին թույլատրել մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնել մինչև 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքը՝ բուհի կողմից սահմանված կարգով:

Սույն փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2018-2019 ուս. տարվա 2-րդ կիսամյակից:

Գիտխորհրդի նախագահ Վ.Ուռուտյան

Գիտքարտուղար Դ.Ս.Բալասանյան